№ 84 ՄԱՅԻՍԻ 24 (ՅՈՒՆԻՍԻ 5) 1878 ՄԱՅԻՍԻ 24 (ՅՈՒՆԻՍԻ 5) № 84

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ. կէս տարվանը 6 բուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ է կատարվում Գերմանիայում— Ներքին տեսութիւն։ Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։ Սերբիա։ Հայոց կուսակցութիւնները։ Արտաքին լուրեր։ — Յայտարարութիւններ։ — Տեղեկացոյց։ — Բանասիրական։ Ջալալէդդին։

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Ընթերցողին յայտնի է թէ գերմանական կայսրի վրա նորեռումն փորձ էր փորձված ատրճանակ արձակելու, նրան սպաննելու դիտաւորութեամբ։ Չղեռնագործութիւնը չաջողվեցաւ։ Դատարանում յանցաւորը, որի ազգանունն է Հէոդէլ, և որ մի հասարակ մշակ է, հաստատում էր որ դիտաւորութիւն չուներ կայսրին սպաննելու, այլ ուզում էր հրապարակապէս անձնասպանութիւն գործել, որ ցոյց տայ թէ մշակ դասը Գերմանիայում նիւթապէս շատ անմխիթար դրութեան մէջն է, և նրան ուրիշ ելք չեր մնում, եթէ ոչ վերջ դնել իր կեանքին։ Անձնասպանութեան հրապարակապէս գործելու պատճառը Հէոդէլ բացատրում էր մշակ դասի այդ անմխիթար դրութեան վրա հասարակութեան և տէրութեան ուշադրութիւն դարձնելու դիտաւորութեամբ։

Վկաները, ընդհակառակն, հաստատեցին, որ ատրճանակը ուղղված էր կայսրի վրա։

Թէև գերմանական սոցիալ-դեմոկրատների բոլոր կուսակցութիւնները պաշտօնապէս մերժեցին իրանց համերաշխութիւնը Հէոդէլի հետ, որ վաղուց է աքսորված էր սոցիալ-դեմոկրատների ընկերութենից, բայց գերմանական տէրութիւնը այնու ամենայնիւ վերաբերելով Հէոդէլի արածը սոցիալական կուսակցութեան վարդապետութեան ներգործութեանը, մշակեց օրէնքի մի նոր պրոյեկտ, որի նպատակն էր սահմանափակել լրագրութեան սոցիալական ձգտումները և սահմանափակել ազատ ժողովելու իրաւունքը։ Պրոյեկտը սահմանում էր բաւական խիստ պատիժներ և մեծ իրաւունքներ էր տալիս պոլիցիային, առանց դատաստանի, փակել սոցիալ-դեմոկրատների ժողովները, արգելել և խափանել նրանց լրագիրները և այլն։

Օրէնքի այդ պրոյեկտը առաջարկվեցաւ գերմանական պարլամենտին և ամենքը հաւատացած էին որ պրոյեկտը կընդունվի։ Բայց պարլամենտը ձայների մեծ բազմութեամբ, այն է 251 ձայնով 57 ձայնի դէմ, մերժեց պրոյեկտի առաջին յոդուածը։ Այն ժամանակ մինիստր Հոֆման յայտնեց թէ տէրութիւնը նշանակութիւն չէ տալիս պրոյեկտի մնացած յոդուածներին։ Որանից յետոյ պարլամենտի նստերը փակված յայտնվեցան ամառվայ արձակուրդների պատճառով և պատգամաւորները բաժանվեցան երեք անգամ ոգևորված «կեցցէ կայսր» աղաղակներ արձակելով։

Լրագիրները կարծում են որ պրոյեկտի պարլամենտի կողմից չընդունելուց յետոյ, տէրութիւնը բոլորովին կարճակի այժմեան պարլամենտը։ Բայց ուրիշ լրագիրներ կարծում են որ տէրութիւնը այդ չի անի, լաւ գիտենալով որ նոր ընտրութիւնները գուցէ սոցիալիստների աւելի էլ մեծ թիւ կուղարկեն պարլամենտ։

Մի քանի ժամանակից յետոյ, այն է մայիսի 21-ին (յունիսի 2-ին), Վիլհելմ կայսրի վրա կրկին ատրճանակ արձակվեցաւ «Unter den Linden» փողոցի մի տանից։ Ատրճանակի ազգանունը պարզ չէ գրած հեռագրի մէջ, միայն երևում է որ նա հասարակ մշակ չէ այլ դոկտոր է։ Արդեօք նա էլ պատկանում է սոցիալ-դեմոկրատների կուսակցութեանը թէ ոչ,— այդ երևի շուտով կը բացատրվի հետևեալ հեռագիրներով և լրագիրներից բերած տեղեկութիւններով։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նորին կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Միքայէլ Նիկոլայևիչ, և Նորին կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխանուհի Օլգա Ֆէոդորովնա, Օգոստափառ որդու Մեծ Իշխան Նիկոլայ Միխայէլովիչի և Մեծ Իշխանուհի Անաստասիա Միխայէլովնայի հետ, մայիսի 21-ին երեկոյեան 10 ժամին վերադարձան Թիֆլիս։

Սացանք Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան հրատարակութեան № 2 և 11 տետրակները։

Խմբագրութեան մէջ ստացվեցաւ ՔՈՒԹԱՅԻՍԻ Միքայէլեան կալուածական բանկի 1876 և 1877 թուերի հաշիւը (Отчетъ Михайловск. Дворянск. Земельн. Банка въ Кутаисѣ за 1876 и 1877 г. г.)։

ՋԱԼԱԼԷԴԴԻՆ

(ՄԻ ՊԱՏԿԵՐ ՆՐԱ ԱՐՇԱՒԱՆՔԻՑ)

Թ.

Մութը գիշեր էր։ Ամպամած երկնքի վրա ոչ մի աստղ չէր երևում. երկինքը ու գետինքը, կարծես, միացած էին թանձր—սևաթոյր զանգուածով։ Ամեն ինչ լուռ էր. միայն գիշերային սառն քամին գուշակում էր մրրիկ և անձրև։ Հեռաւոր լեռների վրա կայծակը երբեմն փայլատակում էր. և որոտման խուլ ձայնը մանր գղրդիւններով տարածվում էր խաւարի մէջ թաքնված սարերում։

Գիշերային այս սոսկալի պահուն, մի քանի ոտաներներ, թափառաշրջիկ ուրուականների նման, խաւարի մէջ շարժվում էին. նրանք միացան, մի փոքրիկ խումբ կազմեցին, կարծես, մի բանի վրա խորհելու համար. յետոյ կրկին բաժանվեցան և առանձին—առանձին սկսեցին դիմել դէպի Բարդուղիմէոս առաքեալի վանքի գիւղը, որ համարեա թէ վանքի մօտումն էր։

Գիւղը նոյն ժամուն խաւար և լուռ էր, և մի ընդարձակ գերեզմանատան նման, ամեն շարժում, ամեն կենդանութիւն հանգչել էր այնտեղ։ Բայց մի տեղից միայն երևում էին լոյսի նշոյլներ. դա վանքի հոկայական շինուածքն էր, որ կանգնած էր բարձր բլուրի գլխին, որի շուրջը բացվում էր մի խորին անդունդ, որ կորած էր մթութեան մէջ. միայն այնտեղից հոսող գետը իր զայրացած գոռում—գոչումներով վրդովում էր տիրող լռութիւնը։

Եթէ մի մարդ նոյն ժամուն մտնելու լինէր յիշեալ շինութեան մէջ, որտեղից լոյս էր նշմարվում, նրա աչքերի առջև ներկայանալու էր մի այպիսի տխուր տեսարան.—գեղեցիկ տաճարը բոլորովին մերկացել էր իր փառահեղ զարդարանքից, նրա հոյակապ կամարների ներքոյ տիրում էր դատարկութիւն միայն. ոչ խաչեր, ոչ գրքեր, ոչ պատկերներ, ոչ ջահեր, ոչինչ չէր երևում. սուրբ սեղանը ներկայացնում էր սպանդանոցի նման մի բան, որ չաղախված էր արիւնով...։

Տաճարի մի կողմում կապած էին ձիաներ, որ խոտ էին ուտում. իսկ միւս կողմում նստած էին մի խումբ քրդեր։ Մէջտեղում վառվում էր մի անագին խարոյկ։ Տաճարի մէջ գտնված փայտեղէնները—աթոռները, գրականները, գրները—հետզհետէ ջարդում էին և ձգում խարոյկի վրա, նրա բոցերը ստուգացնելու համար. Կրակի մէջ դրած էին մի քանի չամփուրներ և պղնձէ թասեր, որոնք այն աստիճան չեկացել էին, որ հազիւ որոշվում էին կարմրած ածուխներից։

Կրակից ոչ այնքան հեռու, թևքերը և ոտները չուանների կապկապած, մերկ սալայատակի վրա, ընկած էին մի քանի մարդիկ, և սարսափելի խռովութեան մէջ սպասում էին մի դառն ճգնաժամի։ Եթէ մի մարդ կը ցանկանար տեսնել գեհենի դատապարտեալների յուսահատական երեսները,—այդ թշուառների դէմքը նոյն օրինակն էր կրում։

Նրանցից փոքր ինչ հեռու, խառնիխուռն կերպով, դիզված էին զանազան իրեղէններ, որ կացուցանում էին վանքի անօթեղէնները և նրա նուիրական կարասիքը։

Քրդերից մէկը վերկացաւ և մօտեցաւ կապվածներին այս խօսքերով։

—Ասացէք, անհաւատներ, էլ ինչ ունէք թագցրած. ասացէք, մի պահէք, թէ չէք ուզում չան նման սատկել։ Տեսնում ք այն կարմրած չամփուրները.—ձեզ համար են պատրաստված։

—Աղայ, քո ոտներին մատաղ լինենք, պատասխանեցին կապվածները ողորմելի ձայնով.—հէնց էն էր, ինչ որ կար. էլ ուրիշ ոչինչ չէ մնացել. եթէ մի բան պահած լինենք, թող Աստուած մեր աչքերը քոռացնէ, թող մեր հոգին դժոխքի բաժին լինի։

—Սուտ էք ասում, անիծված չներ, գոռաց քուրդը.—այդ վանքում մի թագաւորի հարստութիւն կար. ինչ եղաւ։

Աղայ, քո ոտների հողը դառնանք, խղճա մեզ, մի սպանիր... թող Աստուած մեզ փչացնէ, եթէ մեր լեզուից սուտ խօսք դուրս գայ.—Այս էր, ինչ որ մնացել էր. բոլորը տարան, ոչինչ չը թողեցին...։ Դուք լաւ գիտէք, այս մի քանի օրում այս վանքը քանի քանի անգամ կողոպտվեցաւ... ծով լինէր, կը ցամաքէր, սար լինէր կը հալվէր...։

Խօսող քուրդը, որ իր խմբի գլխաւորն էր երևում, դարձաւ դէպի ընկերներից մէկը.

—Այս գաւուրները մինչև չամփուրների համը չը տեսնեն, ուզիզը չեն ասելու։ Բերեցէք։

Քրդերից մի քանիսը մօտեցան կապվածներին և սկսեցին մերկացնել նրանց, իսկ մի քանիսն էլ կրակից դուրս բերեցին կարմրած չամփուրները։

—Սկսեցէք, հրամայեց առաջին խօսողը.—միայն խաչի ձեով, դրանք շատ են սիրում խաչը։

Դահիճները սկսեցին կարմրած չամփուրներով խաչաձև դաղել կապվածների մերկ կուրծքը և նրանց մարմնի ուրիշ մասները։ Կրակի նման չիկացած երկաթը այրում էր և ջըզ-ջըզալով խրվում էր կենդանի մսի մէջ... և մուխը ճենճային խանձոտութեամբ վեր էր բարձրանում։ Մի փոքր սառած երկաթները կրկին կըրակի մէջն էին դնում և վեր էին առնում նորերը։ Դժոխային գործողութիւնը շարունակվում էր։ Թշուառները հառաչում էին, մրմնջում էին, և ցաւալի ձայներ էին հանում...։

—Մի անգամով մորթեցէք, սպանեցէք, ի սէր Աստուծոյ, թող շուտ մեռնենք գոռում էին նրանք։

Այսպէս անդադար մրմնջում էին ողորմելիները, բայց գործողութիւնը դեռ շարունակվում էր. մինչև այլ ևս հասկանալի չէին լինում նրանց խօսքերը, միայն լսելի էին լինում խուլ հառաչանքներ...։

Բաւական է, հրամայեց խմբի գլխաւորը և դարձաւ դէպի կապվածներից մէկը, որին դեռ ձեռք չէին տուել։

Այս թշուառականը քահանայ էր։

—Թող պահեցինք վերջումը, որ քո տանջանքը աւելի փառաւոր լինի, ասաց քուրդը հեգնական եղանակով։

—Տեսնում ես կրակի մէջ այն կարմրած պղնձէ թասը. նա թագի շատ նմանութիւն ունի. նրանով պիտի պսակեմ քո գլուխը, որովհետև քահանայ ես։

Քահանան, չարժված կրօնական զգացմունքով, պատասխանեց.

—Իմ Տէրը փշեայ պսակ կրեց, իսկ նրա ծա-

ԹԻՖԼԻՍԻ Քաղաքային Վարչութիւնը յայտնում է ընդհանուր գիտութեան որ նորա ներկայութեամբ յունիսի 2-ին լինելու է աճուրդ առանց կրկնաճուրդի, կապալով տալու համար Թիֆլիս քաղաքի լուսաւորութիւնը երեք տարի ժամանակով. Ցանկացողները կարող են ծանօթանալ կոնդիցիաների հետ Ուպրավայի դիվանատան մէջ ամեն օր առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ, բացի աօն օրերից։

—

ԹԻՖԼԻՍԻ Քաղաքային Վարչութիւնը պատրաստել է զեկուցում Թիֆլիսում կառուցանելու Չրանցքի մասին։ Զեկուցումը արդէն տպված է և ուղարկված է բոլոր ձայնաւորներին։ Այդ խնդրի մասին կը խօսենք։

—

Շնորհակալութեամբ ստացանք բժշկապետ Յարութիւն Յովհաննիսեանի ռուսերէն բրոշիւրը «Բորժոմ և նրա միներալական աղբիւրների մասին» վերնագրով (Боржомъ и его минеральные источники сост. Д-ръ Мед. Артемій Іоаннисіани. Тифлисъ. Типогр. А. Михельсона, 1878 г.)։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ հաղորդում են թէ պ. Բազիլէվսկի որ ռուս երևելի սեղանաւորներից մին է, մեռել է 92 տարեկան հասակում։ Ասում են թէ 35 միլիոն ռուբլու չափ հարստութիւն ունէ։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Օրերումս Երևանի գաւառում գտնվող Դաւալու ամենանշանաւոր գիւղում սաստիկ հեղեղ է եղել։ Գիւղը կիսով չափ վնասված է, տները լցված են ջրով, իսկ միւս տներում ապրելը վտանգաւոր է։ Գիւղացիք դաշտի մէջ վրանների տակ են ապրում։ Ասում են, որ մարդիկ էլ են խեղդվել, բայց դեռ հաստատ տեղեկութիւն չեմ ստացել։ Այդ գիւղում շատ գաղթական հայեր կան, երևի դրանք էլ վնասված կը լինեն»։

—

Երկուշաբթի, մայիսի 22-ին, հայ թատրոնական դերասանների խումբը ԹԻՖԼԻՍԻ ամարային թատրոնում տուեց մի ներկայացում բարեգործական նպատակով։ Խաղում էին Շիլլերի «Աւազակներ» պիեսայից երեք գործողութիւն և պ. Սունդուկեանի «Գիշերվայ սաբրը խէր է»։ Հոդը վիրը։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Վերջին ժամանակները այստեղ մի քանի անգամ հեղեղ պատահեց, բայց քաղաքին չը վնասեց, որովհետև հեղեղի ճանապարհը, ինչպէս ձեզ յայտնի է, կտրած է։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

Արտաքին գործերի մինիստր պ. Վադինգտոնի ատենաբանութիւնը որ հրատարակված էր «Մշակի» անցած համարներից մէկում, խորհրդածութեան նիւթ է եղած այսօր եւրօպական լրագիրներում։ Դեռ մի քանի օրից առաջ հրատարակած էին լրագիրներից մի քանիսը թէ Ֆրանսիան Անգլիայի հետ համակիր և դաշնակից է եղած պաշտպանելու համար Անգլիայի պահանջները արևելեան վէճի վերաբերութեամբ։ Պ. Վադինգտոնի ատենաբանութիւնը պարզ և որոշ կերպով մերժում է այդ կարծիքները և հաստատում է թէ Ֆրանսիայի հանրապետութեան քաղաքականութիւնն է միշտ պահպանել խաղաղութիւնը։ Դէպուտատների ժողովը ծափահարութիւններով ընդունելով իր արտաքին գործերի մինիստրի խօսքերը, հաստատում է չէզոքութեան քաղաքականութիւնը, մի և նոյն ժամանակ յայտնելով նաև իր ստորագրած դաշնագիրները։ Այդ չէզոքութիւնը ոչ թէ միայն չէ ստորացնում Ֆրանսիայի ունեցած դերը եւրօպական մեծ պետութիւնների ներդաշնակութեան մէջ, այլ ընդհակառակ մեծացնում է, կանգնացնում է նրան։ Վադինգտոնը իր ատենաբանութեան մէջ ասած էր թէ արևելեան հարցի վերաբերութեամբ դիպլոմատական մի քանի գրութիւններ ունի իր ձեռքում, որոնցից մի քանիսը յարմար ժամանակին կը ներկայացնէ խորհրդարանին և մի քանիսն էլ այլ տէրութիւններից մատնմրէն հաղորդված գաղտնիքներ են։ Այդ բաւականին ցոյց է տալիս թէ Ֆրանսիան նորից ստացել է Եւրօպայում իր ունեցած վարկը և ազդեցութիւնը որ նախորդ կառավարութիւնների գործած սխալներով կորցրած էր։ Պ. Գամբէտայի, պատգամաւորների ժողովում հանրապետական մեծամասնութեան գլխաւորի, ատենաբանութիւնը որ խօսեցաւ բիւդժէտային մանամաղովի նախագահական աթոռը բազմած ժամանակ, հաստատում է Վադինգտոնի խօսքերը։ Գամբէտան զինուորական ծախքերի վերաբերութեամբ խօսելով, ասած է թէ «Խորհրդարանը միշտ կը տայ Ֆրանսիային ամեն միջոցներ որ իր պաշտպանողական զօրութիւնը կատարեալ լինի։ Բայց մի և նոյն ժամանակ յայտարարած է «այն մեծ սկիզբը որի մասին համաձայն են թէ կառավարութիւնը, թէ քաղաքագէտ անձերը և թէ նոյն իսկ ժողովուրդը։ Այդ սկիզբը որ ընդունված է ամենքից, այս է թէ Ֆրանսիան կը շարունակէ մնայն խաղաղութեան և քաղաքակրթութեան գործը։»

Վօլտէրի մահուան հարիւրերորդ տարին լրանում է։ Ֆրանսիայի ազատականները պատրաստվում են մեծ հանդէսով պատուել նրա դարեդարձը։ Գուցէ արուեստահանդէսի զբաղումները արգելք կը լինէին այդ հանդէսի պատրաստութիւններին, ժողովուրդը իր բոլոր ուշադրութիւնը այժմ արուեստահանդէսին տված լինելով. բայց Օրլէանի Դիւպանլու արքեպիսկոպոսը իր գրութիւններով արթնացրեց ժողովրդի ուշադրութիւնը և հետաքրքրութիւնը։ Անխոհեմ թշնամին իր անտակտ յարձակումներով ինքն է պատճառ լինում որ իր հակառակորդը աւելի պատիւ և աւելի համակրութիւն ունենայ։ Դիւպանլու արքեպիսկոպոսը լրագիրներում նամակներ հրատարակելով և բրոշիւրներ ձրի բաժանելով ժողովրդի մէջ, աշխատում է որ չը լինի այդ հանդէսը։ Նա անուանում է Վօլտէրի յիշատակը պատուելու գործը «մի սկանդալ, մի սարսափելի նախատինք Ֆրանսիայի կաթոլիկութեան և քրիստոնէութեան դէմ։» Նա յիշեցնում է կառավարութեան թէ տակաւին Ֆրանսիայում կան օրէնքներ որոնք պատժում են կրօնի դէմ եղած թշնամանքը։ Եթէ Դիւպանլու արքեպիսկոպոսը ուզենար պատուել Վօլտէրի յիշատակը, գուցէ այնչափ փառաւոր չէր լինի այդ հանդէսը որչափ կը լինի այժմ իր սաստիկ հակառակութեան պատճառով։ Վօլտէրի համակրողներ ունեցողները և նրա հանճարի վրա զմայլողները այժմ կը ստիպվեն պաշտպանել նրա յիշատակը։ Դիւպանլու այդպիսի յարձակումներ անելով կը զրգռի ամեն ազատասէրներին որ կրօնական աննողութեան դէմ մի ցոյց արած լինելու համար փառաւոր կերպով կատարեն Վօլտէրի դարեդարձի հանդէսը։

1870 թուին, Ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ, Բելֆօրի ամրութիւնները քաջութեամբ պաշտպանող գնդապետ (կոլոնել) Դանֆէրը մեռաւ։ Նրա յիշատակը պատուել են գովասանութիւններով պարլամենտում։ Յուղարկաւորութեան հանդէսը, որի ծախքը տերութիւնը արած է պարլամենտի որոշումի համեմատ, շատ փառաւոր է եղած։ Որոշվել է նաև որ Բելֆօրի ամրութիւններից մինը Դանֆէրի անունով կոչվի նրա յիշատակի համար։

ՍԵՐԲԻԱ

Սերբիայի պաշտօնական լրագիրը՝ մայիսի 15-ի համարում գրում է թէ բոլորովին սուտ են Բելգրադից ուղարկված վերջին հեռագիրները Լօնդօնի «Times»-ին և Վիէննայի «Pesther Lloyd» և «Neue Freie Presse» լրագիրներին որոնց մէջ ասված է թէ սերբիական զօրքերը նորից պատրաստվում են պատերազմի և անց են կենում իրանց համար որոշված սահմանները, թէ Իշխանը կը ճանապարհորդէ Նիշ և թէ կռիւներ են պատահել սերբիական զօրքերի և Արնաւուտների մէջ։ Սերբիական լրագիրը ասում է թէ յիշեալ լրագիրներում հրատարակված այդ հեռագիրները, որոնք Բելգրադից ուղարկված են եղել, Զեմլինում հնարված սուտ համբաւներ են։

Սերբիական կառավարութիւնը յանձնել է Բօսկայում թիւրքաց կառավարութեան ուղարկած գործակատարներին 2500 թիւրք գերիներ որոնք բռնված էին վերջին պատերազմում։ Թիւրք գերիներից 100 հարիւրապետ և յիսնապետ կը մնան Սերբիայում, մինչև Նովի-Բազարի ամրոցի մաքրելը։

ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՄԷՋ ԵՂԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

—

«Обзоръ» լրագրի մայիսի 1-ին (13) Կ. Պոլսից գրած պատահական թղթակցութենից։ «Ձեր ընթերցողների համար անհետաքրքիր չեմ համարում, ծանօթացնել ընդհանուր գծերով, այն զանազանակերպ կուսակցութիւնների հետ, կամ, աւելի ճիշտը, այն ուղղութիւնների հետ, որոնց վրա բաժանվում է մեր հայ ինտելիգենցիան։ Թէպէտ անցեալ տարվայ արևելեան պատերազմը սկսվելու ժամանակից, հայերի մասին առհասարակ քիչ չէր գրված, բայց Թիւրքիայի այս ժողովրդի ներքին քաղաքական կեանքը, դեռ ևս ոչ ոք չէ նկարագրել։ Այս պատճառ սիրով կընդունի պղնձէ թասը...։ Բայց միաքդ բեր, աղայ, որ վերևումը Աստուած կայ, այն այս բոլորը տեսնում է, որ մեր ամենիս տէրն է. նա անպատիժ չի թողնի այն մարդուն, որը թափում է անմեղ արիւն։ Ի՞նչու ես իդուր տանջել տալիս մեզ։ Իմ ընկերները սուտ չասեցին, վանքումը ուրիշ ոչինչ չէ մնացել. ինչ որ կար, բոլորը տուեցինք ձեզ։ Բոլոր գաղտնի պահարանները բաց արեցինք ձեր առջև։ Եւ դուք այնքան անգութ եղաք, որ Բարդուղիմէոս տուաքեալի սուրբ գերեզմանն էլ քանդեցիք, կարծելով թէ այնտեղ գանձ կայ թաղցրած։— Ինչ որ կար, տարաւ Ջալալէդդինը նրանից յետոյ տասն անգամից աւելի քրդերը մտել են այս վանքում... դուք վերջինն էք...

—Սո՞ւտ ես խօսում, կեղծաւոր շուն, գոռաց գաղանը.—բերէք թասը։

Քրդերից մէկը ունելիքով դուրս հանեց կրակի միջից կարմրած թասը. քահանայի ալեզարդ գլուխը բաց արին, և պատրաստվում էին հրաչէկ արախչինը նրա գլխին դնել։ Աստուծոյ սեղանի սպասաւորը նահատակի համբերութեամբ սպասում էր բարբարոսական գործողութեանը։ Նա անմռունչ էր և լուռ. միայն նրա շրթունքները շարժվում էին, և օրհասական տագնապի մէջ խուլ կերպով աղօթում էր...։

Ցանկարծ որոտացին ատրճանակներ, և սուրբ տաճարը վառոդի ծխով լցվեցաւ։ Սարսափը տիրեց բոլորի վրա։ Քրդերից մի քանիսը գլոր վեցան, ընկան, իսկ միւսներին բռնեցին զօրեղ բազուկներով և սկսեցին կապկպել։ Այս բոլորը կատարվեցաւ մի քանի րոպէում և խորին լռութեան մէջ։ Միայն քահանայի ձայնն էր լսելի լինում, որ ասում էր.

—Ի սէր Աստուծոյ, մի սպանէք, թողէք, ինչ որ կամենում են, թող անեն մեզ հետ. դրանց ձեռք մի դիպցնէք. կը կոտորեն հայերին...։

Ողորմելի քահանան, թէև չը գիտէր, թէ ովքեր էին այն յանկարծական փրկիչները, բայց վախենում էր, որ հայոց վանքի տաճարում կատարվելով այսպիսի սպանութիւններ, տեղային քրդերի վրէժխնդրութիւնը կը հրաւիրէին ամբողջ հայերի վրա,—թէև քրդի սրտում մի այսպիսի կասկած երբէք ծնվել չէր կարող, թէ երկչոտ հայը կարող է մարդ սպանել...։

Նոր եկաւորների երեսները բոլորովին կապած էին, միայն աչքեր էին երևում։ Նրանք հագնված էին քրդի հագուստով և խօսում էին քրդի լեզուով։ Թով շատ չէին նրանք, բայց այնպէս անակնկալ վրա տալով, կարողացան առաջիններից մի քանիսին սպանել և մնացածներին կապելով դուրս տանել։ Ո՞ւր տարան յայտնի չէր։ Միայն քառորդ ժամից յետոյ երկուսը կրկին վերադարձան, և արձակելով քահանայի ու նրա կիսակենդան ընկերների կապանքները, ասեցին նրանց։

—Դեռ բաւական գիշեր կայ. մինչև արևի ծագելը դուք կարող էք մօտենալ Պարսկաստանի սահմանին. այնտեղ ապահով կը լինէք։ Այստեղ կան պատրաստի ձիեր. բարձեցէք, ինչ որ հաւաքված է այստեղ, որ պէտք է քրդերը տանէին. և դուք նստեցէք նրանց ձիաները, շուտով ճանապարհ ընկէք։

—Իմ ընկերների մէջ կեանք չէ մնացել, ասաց քահանան։

—Մեզանից երկուսը ձեզ հետ կը գան, պատասխանեցին անծանօթները։

Քահանան խնդարվեցաւ և կամենում էր գրկել նրանց ոտքերը։

—Այդ հարկաւոր չէ, ասաց նրանցից մէկը.—պատրաստվեցէք շուտ հեռանալու այստեղից։

—Ես չը պէտք է գիտենամ, ով է ազատում մեզ, հարցրուց քահանան։

—Ոչ, դու չը պէտք է գիտենաս, ասեցին նրան։

—Եւ ձեր ինչ ազգից լինելը։

—Այս էլ պէտք չէ գիտենալ։

Մի քանի րոպէի մէջ անծանօթները պատրաստեցին քրդերի ձիաները, որ կապած էին տաճարի մէջ, և այնտեղ դիզված իրեղէնները լցնելով խուրջինների մէջ, կապեցին նրանց վրա։ Յետոյ կարմրած չամիւրներից վիրաւորված թշուառներին նստացրին բեռների վրա և ճանապարհ դրին։

Քահանան դեռ իր ձին չը հեծած, կրկին անգամ մօտեցաւ անծանօթներին և ասաց։

—Գոնէ թոյլ տուեցէք, օրհնեմ ձեզ։

—Այդ ևս հարկաւոր չէ, ասաց նրանցից մէկը.—միայն դու պատասխանիր, ինչ որ կը հարցնեմ քեզ։

—Հարցրէք։

—Այս վանքի գիւղումը ոչ ոք չէ՞ մնացել։

—Մի հոգի էլ չը կայ։

—Ի՞նչ եղան։

—Մի մասը գաղթեցին դէպի Պարսկաստան, մի մասը կոտորեցին, մի մասն էլ գերի տարան։

—Դու ճանաչում էիր այս գիւղում ռէս Յ... անունով մէկին, որ տանուտէր էր։

—Ճանաչում եմ. ես ինքս վանքի գիւղի քահանան եմ։

—Գիտես, ինչ եղաւ նրա ընտանիքը։

—Տանուտէրին սպանեցին. որդիքը տանը չէին, ազատվեցան, բայց աղջկան տարան քրդերը։

Վերջին խօսքը կայծակի նման դիպաւ անծանօթի սրտին. նա մի քանի րոպէ չփոթութեան մէջ մնաց, յետոյ հարցրուց։

—Եթէ ասէիր ինձ՝ ուր տարան, կամ ինչ ցեղից էին քրդերը. քեզանից շնորհակալ կը լինէի։

—Թէ ուր տարան, այս ես ասել չեմ կարող. բայց տանողները չիշակների ցեղից էին.—Զալալ-Ահմէի մարդիկը։

—Բաւական է, վերջացրուց անծանօթը։—Հիմայ կարող էք գնալ։

Քահանան իր ընկերների հետ հեռացան։ Երկու հոգի անծանօթներից տարան նրանց ճանապարհ դնելու մինչև պարսից սահմանը։ Վանքի տաճարի մէջ մնացին տասներկու հոգի անծանօթներից։ Այն ժամանակ նրանցից մէկը բաց արեց իր կապած դէմքը, երևի, փոքր ինչ ազատ շունչ առնելու համար։ Եւ դեռ վառվող խարոյկի լուսով կարելի էր տեսնել Սահրատի մեռելի նման գունաթափված երեսը...։

Նա նստեց կրակի մօտ մի փոքր հանգստանալու համար իր հոգեկան խռովութիւններից։ Նրա միւս ընկերները կտրատում էին անագին վայրենի խոզի մարմինը, անց էին կացնում իրանց հրացանների սուսերների վրա, և խորովում էին, որ ընթրիք պատրաստեն։ Նրանք ուրախ էին. միայն Մրստոն իր կարեկցական աչքերը չէր հեռացնում իր տիրոջ երեսից, և կարծես, աշխատում էր կարդալ այն սպանված դէմքի վրա ինչ որ ալեկոծում էր նոյն ժամին նրա վշտահար սիրտը։

Անբաղդ երիտասարդ, նա ունէր մի միխթարութիւն միայն, նրանից ևս զրկվեցաւ։ Նա յոյս ունէր այստեղ, այս վանքի մօտակայքում գտնել այն նազելի արարածին, որին պատկանում էր իր սիրտը, որին միայն սիրում էր իր համար ատելի աշխարհի մէջ։ Բայց նա չը կար, մի

ռով յոյս ունեմ, որ ձեր ընթերցողները կը կարդան իմ համառօտ նկարագրութիւնը ոչ առանց օգտի, մեր հայերի ձգտումների և յոյսերի մասին մէկ պարզ գաղափար կազմելու համար։

«Թիւրքիայում հայերը կազմում են բաւական մեծ ընկերութիւն կամ ազանդ, որոնք միաբանութեամբ գնում են դէպի մի որոշեալ նպատակ, այսինքն ամբողջ պետութիւն պետութեան մէջ և ազգը ազգի մէջ։ Ամեն ապագայ ունեցող ազգութիւնների նման և ամեն պետութիւնների նման, որոնք ապրում են մասաւոր կեանքով, հայերը չեն վախենում հակասութիւններից, գաղափարների և ձգտումների ընդհարումից, կուսակցութիւններ կազմելուց և կուսակցական երկպառակութիւններից։ Եւրոպական ժողովուրդների փորձից համոզվելով, որ առանց այդպիսի երկպառակութիւնների առաջադիմութիւնը անկարելի է և որ կարծիքների կռիւից և ընդհարվելուց ծագում է թէ ճշմարտութիւնը, և թէ ժողովրդի օգուտը, Թիւրքայ հայերը վաղուց արդէն ձգեցին թէ իրանց փակ կեանքը և թէ իրանց ազանդաւորական ծէսերը և սովորութիւնները, և սկսեցին ապրել համարեա կատարեալ քաղաքական կեանքով, որը ամենից լաւ երևում է նրանց մէջ եղած քաղաքական կուսակցութիւնների առատութենից։

«Թիւրքիայում կան մի քանի այդպիսի կուսակցութիւններ որոնք ձգտում են վճռել ամենքը իրանց կերպ հայոց կեանքի բոլոր օրական հարցերը։ Նոքա իրանց ներկայացուցիչներ ունեն։ Խորէն Նարբէյ և Մատթէոս Իզմիրլեան, Ռուսաստանի կուսակցութեան ներկայացուցիչներ են։ Նոքա Կ. Պոլսի ազգային ժողովի մեծամասնութեան վստահութիւնն են վայելում։ Նորերումս նրանք համարեայ ծածուկ կերպով թողեցին Կ. Պոլիսը չը նայելով անգլիամոլութեան հետ խառն Փանատիկոս Թիւրքասէր Ներսէս պատրիարքի դրած արգելքին, որը հրաժարվեց անցաթուղթեր տալ նրանց։ Այնուամենայնիւ այս կուսակցութեան եռանդոտ առաջնորդները կարողացել են իրանց պատրիարքի դրած արգելքի առաջն առնելը հիւանդութեան մասին բժշկական վկայականներ ներկայացնելով և իրանց հաւատակիցներից կատարեալ իշխանութիւններ ստանալով ուղևորվեցին Ռուսաստան։ Նրանցից մէկը, ինչպէս լրագրները յայտնում են, արդէն ներկայացաւ ռուսաց Կայսրին և իշխան Գորչակով կանցլերին։ Միւսը, Իզմիրլեան, ամենայն հայոց կաթուղիկոսի աթոռանիստ տեղը-Էջմիածին ուղևորվեց, խնդրելու կաթուղիկոսին ռուսաց Կայսրի առաջ միջնորդել Թիւրքայ հայերի դրութեան բարւոքման գործին օգնելու։ Ինչ որ վերաբերում է Խորէն Նարբէյին նրա պատգամաւորութեան նպատակը յայտնի է. նա Թիւրքայ հայերի համար ցանկանում է, գոնէ, այնպիսի կառավարութեան ձև, որպիսին ունի Լիվան։

«Անգլիական կուսակցութիւնը բաղկացած է նախ, բողոքական հայերից, որոնք հեռացել են իրանց նախկին կրօնից։ Յայտնի է որ Նիւ-Յորկի Բօեարդի ընկերութեան պատկանող միսիոնարների վարդապետութեան շնորհով, Թիւրքայ հայերից շատերը ընդունեցին բողոքականութիւն։ Մի քանիսները հաւատափոխ եղան ճարպիկ քաղաքականութեան համոզմունքի տակ, միւսները նմանվելով փոխեցին իրանց կրօնը, մնացածներն էլ լաւ վարձատրութեան համար, որ տալիս էր նրանց միջոց բաւականացնելու իրանց օրական պիտոյքները։ Բայց և կային այնպիսիներ, որոնք բողոքականութիւնը ընդունեցին քաղաքական նպատակով։ Մի ժամանակ դրանք թշնամական ցոյցեր էին Թիւրքայ հայ-փաշաների դէմ։

«Փորձով ստուգելով, և տեսնելով որ խաբվել են բողոքական միսիոնարների մեծամասնութեան անշահասիրութեան վերաբերութեամբ, հայ-բողոքականներից շատերը արդէն դառնում են իրանց եկեղեցու գիրկը։

«Մի և նոյն անգլիական կուսակցութեան միւս բաժինը, ազգային-ազատամիտների կուսակցութիւնը, քաղաքական համոզմունքներից դրդված, գրաւվեցաւ անգլիամոլութեամբ։ Նրա վրա ներգործեց Անգլիայի կախարդանքը, որպէս քաղաքական ազատութիւն ունեցող երկիր և անգլիական հասարակութեան և կառավարութեան հայերին ցոյց տուած համակրութեան մասնաւոր նշանները։ Այս կուսակցութեան անդամները մեծ մասամբ պատկանում են ինտելիգենտ դասին։ Նրա Leader-ն է նախկին մինիստր և Միդհադի կուսակից Օդեան-էֆենդին։ Ռուսականից յետոյ այս կուսակցութիւնն ունի ամենամեծ նշանակութիւն, մանաւանդ այդպիսի անկարգ երկրի մէջ, որպիսին Թիւրքիան է, որտեղ խօսքի ազատութիւնը զուգընթաց է գնում մարդու իրաւունքները ամենածայրայեղ ոտի տակ գցելու հետ։ Ես կարծում եմ, որ այն կուսակցութիւնը ամրում է ամբողջ Հարուստ դասին։ Այս կուսակցութիւնը ուղարկեց Լօնդոն նախկին պատրիարք Խրիմեանին, որպէս հայոց պատգամաւոր։ Այս կուսակցութիւնը նշանաւոր կերպով կռւում է ռուսաց կուսակցութեան հետ։ Կ. Պոլսի հայոց ազգային ժողովի մեծամասնութիւնը պատկանում է ռուսաց կուսակցութեան և դա վճռեց միայն Ռուսաստան ուղարկել պատգամաւորներ։ Լայարդի և կաթոլիկական կուսակցութեան ընդդիմադրութիւնը տեսնելով, ազգային ժողովի նախագահ Ներսէս պատրիարքը, որ սկզբից պատգամաւորներ ուղարկելու թոյլատրութիւն էր տուել, վերջը հակառակվեց այս բանին, և միանալով Օդեան-էֆէնդիի հետ, հրաժարվեցաւ պատգամաւորներին անցաթուղթեր տալ։ Այժմ արդէն յայտնի է, որ Խրիմեանը և Խորէն Նարբէյ գտնվում են, մէկը Լօնդոնում միւսը Պետերբուրգում։

(Կը շարունակվի)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Daily News» լրագրի Կ. Պոլսի թղթակցի խօսքերով, մայիսի 19-ին, Մէկկայի շերիֆը դարձաւ դէպի ուղղափառները հրաւիրելով նրանց, որ զինաւորվեն խալիֆը պաշտպանելու համար, որին վտանգ է սպառնում։ Այս հրաւէրը տարածվում է Արաբիայի և Փոքր-Ասիայի վրա, բայց արաբացիք կառավարութենից շատ անբաւական են և համարեա թէ պատրաստ են ապստամբվելու Թիւրքերի դէմ, և այս պատճառով դժուար թէ շերիֆի արաբներին դէպի զէնք կանչելը մի որ և իցէ ազդեցութիւն ունենար նրանց վրա։

—Կ. Պոլսի «Հայրենիք» լրագրում կարդում ենք հետևեալը։ «Սէլիմիյէի զօրանոցը հաստատեալ 23-ի չափ ռուս գերիներ որոց ամենքը բացի մէկէն, Ղարաբաղցի հայ են եղեր, իսկ մինը ռուս, երկու շաբաթ առաջ Գատը-գիւղի քարոզիչ Սրուանձտեանց գեր. Տ. Գարեգին վարդապետի այցելութիւնն ընդունելով, հոգևորապէս մխիթարվելէ և խոստովանվելէ վերջը, կիրակի օր ամենքն ալ Գատը-գիւղի հայոց եկեղեցին երթալով հաղորդուեր և յետ աւարտման եկեղեցու, թաղ. խորհրդոյ անդամոց ծախքովը փառաւոր ճաշը ըրեր են։ Այն հայազգի գերիները ամեն կիրակի եկեղեցի յաճախելու արտօնութիւն ստացեր են։»

—«Մասիս» լրագրի մէջ կարդում ենք որ Բումէլիի երկաթուղիների արտօնատէր աւստրիացի պարոն Հիրշ՝ ուղարկել է հայոց պատրիարքարանը 70 անկողին, 70 վերմակ, 70 վերարկու և 200 զոյգ գուլպա Բումիլիայից Կ. Պոլիս փախած 70 հայ գաղթականների համար։ Պատրիարքարանը այդ նուէրներ յանձնել է հայ գաղթականներին և շնորհակալութեան գիր է գրել առատաձեռն բարերարին։

—Կ. Պոլսից մայիսի 13-ին հաղորդում են «Times» լրագրին թէ Բ. Դուռը բանակցում է Գալատայի յոյն սեղանաւորների հետ, 700.000 անգլիական ստերլինգ ոսկի փոխառութիւն անելու համար, որի վճարումը կապահովացնի Բ. Դուռը մաքսատան եկամուտներով։ Փոխառութեան պայմանները դեռ հաստատված չեն։

—«Polit. Corr.» լրագիրը հաղորդում է, մայիսի 24-ից, որ նորերումս Բ. Դրան շինութեան մէջ եղած հրդեհի ժամանակ, ուրիշ նշանաւոր գոկումենտների հետ միասին այրվեց և Սան-Ստէֆանոյի խաղաղութեան դաշնագրի բնագիրը։

—«Daily News» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են, մայիսի 21-ից հետևեալը. «Զարագանի պալատում, մայիսի 20-ին պատահած անկարգութիւնները աւելի սաստիկ էին, քան թէ յայտնում էր իմ հեռագիրը։ Ալի Սուավի էֆէնդին, որ կայսերական լիցէյի նախկին դերեկտոր և Անգլիայի դէմ յարձակողական նշանաւոր նամակների հեղինակն է, մայիսի 19-ին «Բասիրէթ» լրագրում մի յօդուած տպեց, որի մէջ ասում է, որ Թիւրքիան կանգնած է սխալ ճանապարհի վրա և որ նա միւս օրը մէկ միջոց կը ցոյց տայ այդ չարիքի առաջը առնելու համար։ Երէկ, երկուշաբթի օր, մայիսի 20-ին, նա իր հետ վերցնելով հարիւր զինուորված մարդիկ, գնաց Զարագանի պալատը, որ բանտարկված դրութեան մէջ գտնվում է նախկին սուլթան Մուրադը։ Զինուորները արգելեցին Ալի-Սուավին մտնել պալատը։ Այնու ամենայնիւ նրան աջողվեցաւ մտնել այնտեղ։ Նա կատարելապէս զինուորված էր և նրան պաշտպանում էին ուրիշները. նա Մուրադին սուլթան հրատարակեց, Զօրքեր եկան, սուլթան Համիդին պաշտպանելու համար և հէնց պալատի ներսը մեծ կռիւ պատահեց։ Ալի-Սուավին, ամեն մէկ ձեռքում ռէվոլվեր բռնած, երեք զինուոր սպանեց, բայց վերջապէս նրա վրա յարձակվեցան և սպանեցին։ Պատերազմանաւերը կանգնած էին իսկ պալատի առաջ և բաւական պատրաստութիւններ էր տեսած աւելի մեծ շարժութիւնը ճնշելու համար։ Ես ոչինչ նշանակութիւն չեմ կարող տալ այս գործին, որը մտածել է Թիւրքայ մէկ խելացնոր պրոֆէսսոր։ Այս անաջողութեան պատճառով, աւելի մեծ նշանակութիւն և զօրութիւն կը ստանայ սուլթանը։

դառն վիճակով անհետացել էր նա....

Քաջերի սրտում, կանանց վերաբերեալ, բացի սէրից, կայ և մի ուրիշ զգացմունք, որին բաւական անհամապատասխան բառերով կոչում ենք նախանձ, խանդ, ղէյրաթ.—դա այն զգացմունքն է, որ ցանաք խօսքերով բացատրել անկարելի է։—Դա կնոջ նուիրագործութիւնը յարգելու մի կիրք է, որի համար Յելլենները ամբողջ տասս տարի կռուեցան Տրոյիայի պարիսպների տակ։

Սարհատը չէր վշտանում այն պատճառով միայն, որ կորցրել էր իր սիրելի էակը, այլ առաւել նրա համար, որ նա այժմ գտանվում էր անհարազատ և անմաքուր ձեռքերում.... Բայց որքան այնպիսի անմեղ արարածներ նոյն վիճակին էին ենթարկվել. նրանց համար ով էր հոգացողը։—Դուցէ ծնողքը, անբաղդ հայրն ու մայրը, եթէ կենդանի էին թողել նրանց։ Բայց հոգում էր ազգը, հայ ժողովուրդը։ Ոչ. դրա համար պէտք է յելլենական նախանձախնդրութիւն ունենալ...։

Մտնելով վանքի տխուր կամարների ներքոյ, Սարհատի սրտում կրկին բաց եղան հին հին վէրքերը։ Այս սրբարանը խիստ խորին յիշատակներով կապված էր նրա հոգու հետ։ Այստեղ անցուցել էր նա իր մանկութեան ամենաթանկագին տարիները. այստեղ յանձնել էին նրան աղօթող աբեղաների հսկողութեան ներքոյ ուսանել՝ ինչ որ կրօնը և սուրբ գիրքը ներշնչում է մարդու մէջ, ինչ որ հանդցնում է վառ զգացմունքը, մեռցնում է հոգին, բթացնում է միտքը...։ Եւ մի և նոյն վանքի պարիսպների մօտ մի գեղեցիկ հրեշտակ ողնորեց նրան սրբազան յաւիտենութեամբ նա կրկին կենդանացրուց վանական ժանտախտից մեռած սիրտը, և փրկարար ձեռքով խաւարից դուրս քաշեց նրան և ձգեց լոյս—աշխարհ.... Իսկ այժմ չը կար այն հրեշտակը....։

Մինչ թշուառ երիտասարդը ընկղմված էր իր տխուր մտախոհութիւնների մէջ, նրա ընկերները կազմել էին մի ճոխ սեղան, որ յիշեցնում էր Հոմերոսի հերոսներին։ Գինին ահագին գաւաթներով պարտվում էր ձեռքից ձեռք. և խորոված արիւնթաթախ դուրս էին քաշում շամփուրներից։ Նրանցից ոչ ոք չէր ուզում վրդովել Սարհատի ողբալի մտայուզութիւնը, և այս պատճառով չէին հրաւիրում իրանց հետ սեղանակից լինելու։ Բայց նա արթնացաւ, երբ Դալի-Բաքան, բաժակը ձեռին կանգնած, և երեսը դէպի տաճարի բեմը դարձրած, ճառում էր այս խորհրդաւոր խօսքերը.

«Ո՞վ հայրեր, ով պապեր, այս գաւաթը խմում եմ, բայց առանց նուիրելու ձեր ոսկրներին։ Եթէ դուք այս վանքերի տեղ, որոնցմով լիքն է մեր երկիրը, բերդեր չինէիք։—եթէ դուք սուրբ խաչերի և անօթների փոխարէն, որ սպառեցին ձեր հարստութիւնը, զէնքեր գնէիք.—եթէ դուք այն անուշհոտութեանց տեղ, որ խնկվում են մեր տաճարներում, վառօդ ծխէիք,—այժմ մեր երկիրը բաղդաւոր կը լինէր։ Այլ ես քուրդերը մեր երկիրը չէին քանդի, մեր որդիքը չէին կոտորի և մեր կանայքը չէին յափշտակի.... Այս վանքերից ծագեց մեր երկրի կործանումը, նրանք խլեցին մեր սիրտը ու քաջութիւնը, նրանք ձգեցին մեզ ստրկութեան մէջ, սկսած այն օրից, երբ Տրդատը թողեց իր սուրը և թագը, առեց խաչը և մտաւ Մանիայ այրումը ճգնելու համար....— Ո՞վ հայոց հին աստուածներ, ով Անահիտ, ով Վահագն, ով Հայկ, նուիրում եմ այս բաժակը ձեր սուրբ յիշատակին, դուք փրկեցէք մեզ....

Այսպէս այս սարսափելի մարդը, որ մի ժամանակ քահանայ էր, իսկ այժմ աւազակ, դուրս էր թափում իր սրտի դառնութիւնները գինու բաժակի վրա, որով ամեն մարդ ուրախ է լինում։

Երբ նա վերջացրուց, վեր գցաւ մի ուրիշ աւազակ, որին կոչում էին Քիթաբ-Դալլըը (գըրքից խելագարված). որ մի ժամանակ մանկավարժ էր, իսկ այժմ մտել էր Սարհատի արիւնախում խումբի մէջ։ Նա հետևելով Դալի Բաքայի ոճին, այսպէս սկսեց իր տօստը.

«Խմում եմ այս բաժակը առանց [illegible]ելու ձեզ, ով գիր և դպրութիւն, որովհետև դուք չը տուեցիք մեզ այն, ինչ որ պահանջում է կեանքը և իրական աշխարհը։ Դուք լցրիք մեր գլուխը ունայն, վերացական ցնորքներով։ Դուք չը ծանօթացրիք մեզ մարդկային պահանջների հետ, և չը տուեցիք այն, որ պէտք էր ապրելու համար՝ և հանգիստ ու բաղդաւոր ապրելու համար։ Դուք աւելի զարգացրիք մեր մէջ սև նախապաշարմունքը, և փակեցիք մեր աչքերը լոյսը և ճշմարտութիւնը տեսնելու համար։ Դուք մեզանից դիակներ պատրաստեցիք, որոնց մէջ մեռած է ամեն մարդկային բարձր և վսեմ զգացմունք։ Դուք աւելի պնդացրիք մեր ստրկութեան շղթաները և վարժեցրիք տանել բռնութեան ծանր և անպատիւ լուծը։ Ձեզ ենք պարտական, ով գիր և դպրութիւն, մեր այժմեան դժբաղդութիւններով.—դուք չը տուեցիք մեզ առողջ միտք և առողջ գաղափար, և զրկելով մեզ ճիշդ և իրական գիտութենից, զբաղեցիք և կեանքից.... Ուրեմն, թող անիծվի մեր մամուլը, որ իր մրով աւելի մրոտեց մեր սիրտը, միտքը ու հոգին...։ Եւ թող կեցցէն այն գրիչները, որ նոր հոգի կը ներշնչեն մեզ, որ կը նորոգեն մեր սպառված ուժերը և կը ծանօթացնեն կեանքի իրական պէտքերի հետ և կը պատրաստեն մեզ մարդ լինել՝ մարդկային բոլոր կատարելութիւններով։»

Այսպէս էր խօսում այն մարդը, որին կոչում էին «գրքից խելագարված» որին գրքերը յիմարութեան և տգիտութեան մէջ էին ձգել,—իսկ այժմ զգաստացել էր։

Այս բոլորը լսում էր Սարհատը, տխուր համակրութեամբ լսում էր նա, և այս խօսքերը, կարծես, առժամանակ մի նրան մոռանալ տուին իր ցաւը, որ այնպէս սաստիկ տանջում էր նրան։ Եւ նա թողեց այն նազելի անհատը, որի համար միայն մտածում էր, և սկսեց ընդհանուրի վրա խորհել։ Սիրուհու մասնաւոր սէրը կորաւ անբաղդ և օգնութեան կարօտ ժողովրդի սիրոյ մէջ, որի դստերքը ու կանայքը նոյնպէս գերութեան մէջ էին գտանվում։ Եւ այս պատճառով նա խիստ սառնութեամբ ընդունեց Մըստոի խօսքերը, որ մօտենալով նրան, լռութեամբ ասաց.

—Թող իմ տէրը չը տանջէ իր սիրտը. Մըստոն չան հոտառութիւն ունի. եթէ ծովի խորքումն լինի «նա», կը գտնէ նրան, և եթէ երկինքը բարձրացած լինի, ցած կը բերէ։

Սարհատը ոչինչ չը պատասխանեց և տեսնել անգամ չը կարողացաւ, որ իր հաւատարիմ ծառան աննկատելի կերպով անհետացաւ վանքից...։

(Կը շարունակվի)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԷՐԷՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են՝ ԿԱՐԲՈԼԵԱՆ հեղուկ և փոշի տարափոխիկ հիւանդութիւնների դէմ 1½ ր., ԹԻՆԱՅԻ ԻՒՂ 1¼ ր., ցեարատ մագնեզիայի 2 ր., ԲՕՄ, ԿՕՆԻԱԿ, ՊՕՐՏՎԷՅՆ, ԽԷՐԷՍ և անգլիական օղի 1½ ր., ճանապարհի ամաններ դիւժինը 3 ր., թէյի գդալներ (չէն սեանում) 1½ ռուբլ և բարձր, ճանապարհի դանակներ 80 կ., ճանապարհի ֆիլտրներ 4 կ., մատիտներ հատը 1 կոպ., երկաթի գրիչներ 18 հատը 5 կ., ասեղներ 1000 հատը 80 կ., ծածկոցներ, մանկական շորեր և չը թրջվող վերարկուներ 4 ռուբլ և բարձր, գլխարկներ և ժիլետներ 75 կ. և բարձր, կաւ 10 ր. և բարձր, տրիկո 1 ր. և բարձր, ՊԱՐՈՒՍԻՆ 60 կ. և բարձր, բամպէի 1 ր. արշինը, շղթաներ (Աբիսինիայի ոսկուց) 50 կ. մինչև 3 ր.: Մի և նոյն խանութում շուտով կը ստացվեն ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 6 ր. և բարձր, բիսկվիտներ, մեծ ֆիլտրներ և ՎԵՐԱԿԱՆԳՆԵՑՆՈՂ անուանված մի գեղ, և այլն:

1—20

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹԻ» խմբագրութիւնը պատիւ ունի ծանուցանել, որ ամսագրի նշանակած ժամանակին չը հրատարակվելը կախված էր մի քանի կարևոր և խիստ բազմութենից անկախ պատճառներից: Բայց խոստանում է առաջին համարը անպատճառ յունիսի 10-ին հանել, իսկ հետևեալները կանոնաւորապէս իւրաքանչիւր ամսի 10-ին:

Խմբագրութիւնը խնդրում է բաժանորդ գրվել ցանկացողներից շտապեն ստորագրվելը որպէս զի կարելի լինի մօտաւորապէս որոշել տպագրվելի օրինակների թիւը, որը թղթի թանգութեան պատճառով գործիս մէջ մեծ նշանակութիւնունի:

Աւելորդ չէ համարում յիշեցնել այն բաժանորդներին, որոնք լոկ նամակներով են ստորագրվել, սրանց բաժանորդագինը ուղարկելը, որ վճարը կանխիկ է: Առանց բաժանորդագինը ստանալու ամսագիրը ոչ ոքին չի ուղարկվի:

Խմբագիր Յակոբ Տէր-Յովհաննիսեան:
1878 մայիսի 5-ին.

МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ
ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ
ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ.
АРЖРОУНОУ ГАЛЛЕРЕУМ
ՀԱՏ ԷԺԻՇՆ ԳՆԵՐՈՎ ՎԱՐՁՈՎ ԵՆ ՏՐՎՈՒՄ
ԽԱՆՈՒԹՆԵՐԸ

Կենդանիների հովանաւորութեան Թիֆլիսի ընկերութեան վարչութիւնը յայտնում է, որ վարչութեան կազմակերպութիւնը, ընդհանուր ժողովների վճիռներին համեմատ, այժմ հետևեալն է. նախագահ Ս. Ա. Տալիզին, փոխնախագահ Դ. Ի. Կիպիանի, վարչութեան անդամները՝ իշխան Դ. Դ. Օրջաձէ, Մ. Ն. Գարսեվանով, և անդրկովկասեան մուֆտի Հաջի-Էֆէնդի-Մուստաֆա-Էֆէնդի-Զադէ: Վարչութեան փոխ անդամներ. Մ. Կ. Լոմիձէ, Ե. Ի. Տիմիրիազեվ, Ե. Ի. Շամխարով, գանձապահ Ե. Գ. Սերգէեվ, փոխ գանձապահ Գ. Ն. Իսէլիանի, քարտուղար Ն. Ի. Մեշչերսկի, փոխ քարտուղար Ս. Ս. Շչուկին:

Ներսիսեան Հայոց Ազգային—Հոգևոր դպրոցի աշակերտաց տարեկան հարցաքննութիւնը լինելու է հետևեալ կարգաւ:

Օրը	Ամսաթիւ	Առարկան	Դասատուներ
	1878		
Շաբաթ	Ապրիլի 29	Կրօն, եկեղեցական պատմ. սուրբ պատմ.	I—VI.
»	»	Տօմար	V.
Երեքշաբթի	Մայիսի 2	Հայոց լեզու	I—VI.
»	»	Պատմութիւն հայոց մատենագրութեան. .	VI.
Ուրբաթ	5	Ռուսաց լեզու	I—VI.
»	»	Ռուսաց պատմութիւն.	V.
Երկուշաբթի	8	Հայոց լեզու, ռուսաց լեզու, թուաբանութիւն	Պատրաստական դասատան
Չորեքշաբթի	10	Ֆրանսիացւոց լեզու	II—VI.
»	»	Մանկավարժութիւն	VI.
Ուրբաթ	12	Աշխարհագրութիւն	I—VI.
»	»	Ընդհանուր պատմութիւն	II—IV.
Չորեքշաբթի	17	Մաթեմատիքա	I—VI.
»	»	Գծագրութիւն	II և III.
Շաբաթ	20	Բնագիտութիւն.	I—VI.
»	»	Ֆիզիքական աշխարհագրութիւն	IV և V.
»	»	Ֆիզիքա	V և VI.
Ուրբաթ	26	Ընդհանուր պատմութիւն	V և VI.
»	»	Հայոց պատմութիւն	IV, V և VI.
»	»	Պատմութիւն ընդհանուր մատենագրութեան	VI.
Շաբաթ	27	Գրութիւն, նկարչութիւն երգեցողութիւն .	

Հարցաքննութիւնը սկսվելու է առաւօտեան 8 ժամին. իսկ վեցերորդ դասը ոչ կանուխ քան 12½ ժամն միջօրէի:

Հոգաբարձու Մ. Դոլուխանեանց
Գործաւար Բ. Զալալեանց

ТИФЛИССКІЙ КОЖЕВЕННЫЙ ЗАВОДЪ
ԹԻՖԼԻՍԵԱՆ ԿԱՇՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ
Տաճարական փողոցի վրա Ցունաց եկեղեցու դիմաց տուն № 22

Պատիւ ունի յայտնելու պ. պ. վաճառականներին և սպասաւորներին, որ այդ գործարանում գործվում են և նորա մէջ միշտ մեծ քանակութեամբ գտնվում են տեսակ-տեսակ կաշիներ կօշիկների, թամբերի, կառքերի արուեստների համար և նոյնպէս հում կաշիներ:

Մեծ քանակութեամբ վաճառելը կատարվում է գործարանի կանոնաւորում, որտեղ ընդունվում են և պատուէրներ: Մաս մաս ծախվում է Սիոնի մայր եկեղեցու դիմաց գտնվող մագազինում:

25—18 (2)

Շուտով հրատարակելու եմ իմ ժողոված «Անեկդոտները», որոնք պարունակում են իրանց մէջ շատ երևոյթներ ազգային ներկայ և անցեալ կեանքից:

Տվվելու են բաժանորդագրութեամբ. ամեն մի օրինակի գինը 50 կոպ. է: Թիֆլիսում բաժանորդ կարելի է գրվել պ. Զաքարիա Գրիգորեանցի գրավաճառանոցում:

3—3 Գ. Շերմազանեանց.

Երիտասարդ, որ գիտէ հաշուապահութիւն (բուղալտերիա) Հայերէն և Ռուսերէն լեզուներով, կամենում է տեղ գտնել. համաձայն է և քաղաքից դուրս ծառայելու, հասցէն կարելի է թողնել «Մշակի» խմբագրատանը:

2—3

ՄԱՅԻՍԻ 24. ՏԵՂԵԿԱՑՈՒՑ ԹԻՖԼԻՍ 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Մայիսի 23-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլումպերիալը)	8	30
Հին 82 պր. մ. արժ. 1000 մ.	1550	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1310	—
Վիգրիշնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրիշնի »	235	—
Մարսելի կուրսը 237—	100	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա.	10	67
Վենայի կուրսը ամէ 112 գլ.	121	—
Դուբեժի բարաթը. . .	5	90
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	300	
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը բրօցկու . .	8	—
» միւս տեսակը.	7	80
» չաքարաւազը .	6	—
» տրանզիտը. .	6	50
» մաքսը վճարած	12	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	8	50
Միւս տեսակը հին սերմից.	7	50
Բուրդը թուշի . . .	8	—
» թարաքամի .	4	20
Ալիւր Շորագալու . .	1	40
» Երևանի. . . .	—	—
Գարին.	—	90
Մոմը բնաճարպի (стеар.)	13	—
Մեղաքս Նուխվայ. .	180	—
Կախեթունը. . . .	100	—
Կոկոնը Նուխվայ (բամ.)	45	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	55	—
Կոֆէն մօկօի. . . .	27	—
» լիվանի . . .	22	—
» մարտինկօյինը	20	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծնողկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ. Առանձին սենեակներում ամիսը 30—50 ռուբլ. Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական.

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան. Բժշկապետ Աննանով.

ԹՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան: Մինչև Միխայլովո (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ.

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլովո.	1. 29	11. 57
Ռիոն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	
	առաւօտ.	
Փօթիից . .	9. 13	
Ռիոն . . .	12. 13	
Միխայլովո. .	5. 39	1 37
Գօրի. . . .	7. 5	4 8
Թիֆլիս. . .	9. 31	7 56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Ռիոն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի . .	13. 1	9. 75	5 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7. Իսկ կիրակի օրերը հատարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան.

Ռուսաստանից և Արտասահմանից փօստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր. Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը. Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ. Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր. Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի. Բելիկլիչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ.

ՆԱՄԱԿՆԵՐ

	Կոպ.
Բաց նամակը արժէ	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա . . .	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ.

Երկուշաբթի. Վէրմիշէվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Քուչարեանց վիրաբուժական և ականջի հիւանդութիւններ:

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բէյլիս աչքի հ. 9—11 ժամ, Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան.

Չորեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բակատ կրծքային և ջղային:

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Գավրոն ակից կանանց և մանկաբարձութեան, 9—10 ժամ, Բակատ վենեական և կաշու հ. Օբրէխտ ատամնացաւեր:

Ուրբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բախուտով մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների հ.

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բէյլիս աչքերի հ. Բակատ կրծքային և ջղային հիւանդութիւններ.

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԳԱՆՁԱԿ. Ա. Մ. Թ. Նամակը ստացանք, հասցէն կը փոխենք.

—ԲԱԳՈՒ. Կ. Ա. Հասցէն կը փոխենք.

—ԵՐԵՒԱՆ. Շ. Ստացանք նամակը, շուտով կը տպենք:

—ԳԷՏԱՇԷՆ. Տեղացի. Ձեր նամակը դեռ չենք կարդացել. եթէ անձնականութեան դէմ ոչինչ չի լինի, կը տպենք իբրև պատասխան:

—ՇԱՄԱԽԻ. Ա. Զ. Ձեր վէպը յանձնեցինք մեր աշխատակիցներից մէկին.

—ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆ. Ս. Ա. Ձեր նամակի մէջ ոչինչ ուշադրութեան աւժանի բան չը կայ: Չենք տպի.

—ՇՈՒՇԻ. Ց. Լ. Դեռ ստացված չենք: Գրեցինք ձեզ մի նամակ.

Дозволено Цензурою Мая 23 Тифлисъ 1878 г. Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ